ՆԱՐԻՆԵ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՄՈՎՍԵՍՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 04.10.1982

Ծննդավայր՝ ՀՀ քաղաք Երևան

Նարինե Մնացականի Մովսեսյանը 1989-1997 թթ. սովորել է Երևանի Արա Հարությունյանի անվան միջնակարգ դպրոցում, 1998-1999 թթ. շարունակել է ուսումը թիվ 2 վարժարանում:

1999-2003 թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում՝ ստանալով պատմության, մանկավարժության բակալավրի աստիճան:

2006-2008 թթ. սովորել է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում, Պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնում՝ ստացել պատմության մագիստրոսի աստիճան: 2003թ. աշխատանքի է ընդունվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նորագույն պատմության բաժնում՝ նախ որպես լաբորանտ, 2023 թվականից՝ կրտսեր գիտաշխատող:

2012թ. Ն. Մովսեսյանը համատեղությամբ աշխատում է Երևանի Չայկովսկու անվան երաժշտական մասնագիտացված միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության ուսուցչուհի:

2026 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «1920 թ. թուրք-հայկական պատերազմի լուսաբանումը հուշագրություններում և սփյուռքահայ ու խորհրդահայ պատմագիտության գնահատմամբ» թեմայով:

Ն. Մովսեսյանը հեղինակ է տասնյակից ավելի գիտական հոդվածների։ Ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովներում։

Ն.Մովսեսյանը կուսակցական չէ։

Ամուսնացած է։ Ունի 3 երեխա։